

ՍՐԲՈՑ ԴԵՒՈՆԴԵԱՆՑ
ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ

REV. CARNIG HALLAJIAN, PASTOR

TEL. 791-1583



St. Leon's
Armenian Church

12-61 SADDLE RIVER RD.
FAIR LAWN, N. J.

TEL. 791-2862

ՅՈՒՆՈՒԼԱՐ 28, 1969

Գերաշնորհ
Տ. Թորգոմ Արք. Մանուկեան
Առաջնորդ Ամերիկայի Հայոց
Նիւ Եորք, Ն. Ե.

Սիրելի Սրբազան Հայր,

Սրբոց Դեւոնդեանց Եկեղեցւոյ Տարեկան Անդամական Ժողովը
տեղի ունեցաւ, Կիրակի, Յունուար 26, 1969ին, եկեղեցւոյ սրահին մէջ,
մասնակցութեամբ 78 տրատու անդամներու:

Ժողովին մասնակցող 78 տրատու անդամներու քուէարկութեամբ
երկու տարուայ համար Ծխական Խորհուրդի անդամ ընտրուեցան հետեւեալները
նախապէս ժողովուրդին ղրկուած երկպատիկ ցանկէն.

Զարլզ Փինէճեան 73 քուէով

Ճէրի Տօնապետեան 71 քուէով

Ալեքէտ Ոսկեան 67 քուէով

Նուպար Ճէսուրեան 44 քուէով

Ճէյմս Նուրիկեան 43 քուէով

Իսկ փոխանորդներ՝ Սարգիս Ժամկոչեան 32 քուէ եւ Ճորճ Ամրիկեան 24 քուէ:

Յուսով ենք որ շուտով կը վաւերացնէք վերոյիշեալ ընտրեալ-
ները, որպէսզի կարողանանք փութով աշխատանքի լծուիլ, եկեղեցւոյս պայ-
ծառութեան եւ Աստուծոյ փառքին համար:

Մատչելով Ձեր Ս. Աջոյն

Համոյի Բ. Կարապետեան

Գաւնիկ Բհնյ. Հալլաճեան
Հովիւ



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

ԹՈՐԳՈՄ ԱՐԷԵԳԻՍԿՈԳՈՍ ՄԱՆՈՒԿԱՆ

Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



MURRAY HILL 6-0710

Archbishop Torkom Mancoogian, Primate

Թիւ 21576

Փետրուար 4, 1969

Արժանաշնորհ
Տ. Գառնիկ Քհնյ. Հալլաճեան
Հովիւ Արքեպիսկոպոս Մանուկեան
եւ Սահազատ Ժիւզիկեան Խորհուրդի
ձեռնարկով:

Սիրելի Տէր Գառնիկ,

Ստացած ենք 1969 Յունուար 28 թուակիր 2եր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ 2եր Սահազատեան Յունուար 26ին գումարուած 2եր Ժիւզիկեան Ժողովին մէջ կատարուած է Ժիւզիկեան Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով ընտրուած արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Սկստի ունենալով որ 2եր Ժիւզիկեան Ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան արամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Ժիւզիկեան Խորհուրդի անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել Ժիւզիկեան Խորհուրդի նորընտիր ղեկավար անդամոց եւ եկեղեցւոյ ինքնակալ մարմիններու ատենապետներու անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Թրհնելով Ժիւզիկեան Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք 2եզի եւ 2եր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԷԵԳԻՍԿՈԳՈՍ
Առաջնորդ

Տիրոջ Զարեգ Փինէճեան
Տէրի Տօնապետեան
Ալֆրէտ Ռսկեան
Նուպար Ճէսուրեան
Ճէյմս Նուրիկեան